



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 35ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱԼ**

ԺՈՂՈՎԸ «ՅՈՅԺ ԳՆԱՀԱՏԵԼԻ» ԳՏԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԵՒ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

- ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԾ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՎԱԽԵՐԱՑՈՒԵՑԱԲ
- ԲՐՇ. ՐԱՖՖԻ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՅՈՒՇԱՆՈՒԵՐՈՎ ՄԸ ՊԱՐԳԵԽԱՏՐՈՒԵՑԱԲ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան մեր Թեմի տարեգրութեանց մէջ, Մայիս ամսուան երրորդ շաբաթավերջը սահմանուած է ազգային երեսփոխանական ժողովի տարեկան ընթացիկ նստաշրջանին, որուն ընթացքին, Ծիսական շրջաններու ներկայացուցիչ երեսփոխանները, ժողովականութեան ու կրթական համակարգի պատասխանատուներուն հետ մասին, հանգամանօրէն կը քննարկեն անցնող տարուան ընթացքին տարուած աշխատանքներուն արդիւնքը, կը կատարեն իրենց գնահատականը եւ կը մշակեն յաջորդ տարուան աշխատանքի նիւթաբարոյական ծրագիրները:



Համաձայն այս աւանդութեան, Արեւմտեան Թեմի Ազգային երեսփոխանական ժողովը անցեալ շաբաթավերջին, Ուրբաթ, 18 եւ Շաբաթ, 19 Մայիսին գումարեց իր ընթացիկ նստաշրջանը, որ 35րդն էր Թեմի պատմութեան մէջ:

Ժողովը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնքի «Տիգրան եւ

Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս քարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Ներկայ էին Ազգային Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը՝ Տիար Խաժակ

Տիգրան, Կոստան Ժողովի, Ազգային Վարչության, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի, Ծխական շրջաններու հոգաբարձուներու և յանձնախումբերու ներկայացուցիչները, ինչպես նաև Ազգ. Վարժարաններու տնօրէններ և մանկամտուրներու վարիչներ:

Ազգ. Երեսփոխանական Ժողովը երկրորդ անգամ ըլլալով էր որ կը գումարուէր Նորակառոյց շէնքին մէջ. պէտք է նշել, սակայն, որ ասիկա առաջին ժողովն էր Նոր շէնքի ծրագիրին ամբողջացումէն ետք, որուն համար ժողովականները յատուկ գնահատանք արձանագրեցին:

## **ԲԱՅՈՒՄ**

Նստաշրջանին բացումը կատարուեցաւ Ուրբաթ յետմիջօրէի Ժամը 3ին, Առաջնորդ Սրբազանին գլխաւորութեամբ հոգեւորականաց դասու աղօթքով և շարականի երգեցողութեամբ:

Առաջին հերթին, ժողովը լսեց Մեծի Տանն Կիլիկոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամը, որ ցուցադրուեցաւ պաստառի վրայ: Իր պատգամին ու օրհնութեան խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը գնահատանքով կ'ողջունէր Ազգ. Երեսփոխանական Ժողովը, որ կը գումարուի Ազգ. Առաջնորդարանի Նորակառոյց շէնքին բացումէն կարճ ատեն մը ետք. ան գնահատանք կ'արձանագրէր այս իրագործումին համար, յատկապէս վեր առնելով Առաջնորդ Սրբազանին, ժողովականութեան ու անոնց զօրակցողներուն ճիգերն ու Նուիրաբերումը: Իր խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը նաև կարեւորութեամբ կանգ կ'առնէր երկու այլ հիմնական հարցերու առջեւ, առաջինը՝ կրթական կեանքը, իսկ երկրորդը՝ երիտասարդ սերունդներուն հանդէպ հոգածութիւնը: Վեհափառ Հայրապետը կոչ կ'ուղղէր յատուկ հոգածութիւն ու Նուիրաբերում ցուցաբերելու մեր վարժարաններուն, ձեռնարկել Նոր դպրոցներու բացման, նկատի ունենալով, որ մեր դպրոցները, եկեղեցիներուն կողքին, կը հանդիսանան մեր ժողովուրդին ու Նոր սերունդներուն ոգեղէն սնունդ մատակարարող հաստատութիւնները: Նաև՝ հոգածութիւն ցուցաբերել երիտասարդութեան, որովհետեւ երիտասարդները մեր ներկան են, ապագան ըլլալէ առաջ: Ան կը շեշտէր, որ յատուկ ճիգ ի գործ պէտք է դնել, որպէսզի երիտասարդութիւնը ներգրաւուի մեր ազգային կեանքի բոլոր կալուածներու աշխատանքի դաշտերուն մէջ: Վերջապէս, Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու յաջողութեան մաղթանքները կը փոխանցէր այս ժողովին:

Տեղի ունեցաւ առժամեայ դիւանի ընտրութիւնը: Իբրեւ երիցագոյն եւ կրտսերագոյն ժողովականներ, յաջորդաբար ատենապետ ու ատենադպիր ընտրուեցան Տեարք Վարդգէս Արապեան եւ Մայքըլ Յարութիւնեան:

## **ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԷՐ**

Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան, ժողովականներուն ուղղուած ողջոյնի իր խօսքին մէջ, յոյս յայտնեց, որ «այս գեղեցիկ շէնքէն բխին գեղեցիկ գործեր»: Ան ապա կանգ առաւ Ազգ. Երեսփոխանական Ժողովին ու անհատ երեսփոխաններու առաքելութեան

վրայ, ընդգծելով, որ անոնց դերը չի սահմանափակուիր միայն այս ժողովով,



այլ կը տարածուի ամբողջ տարուան վրայ: Ան իր խօսքը եզրափակեց շնորհակալութիւն յայտնելով ժողովս հիւրընկալող Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Ողջոյնի եւ օրհնութեան իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին շնորհակալութեան խօսք ուղղեց Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հիւրընկալ

հոգաբարձութեան, ինչպէս նաեւ

զնահատանքով արտայայտուեցաւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմին յատկապէս վերջին ամիսներու աշխատանքին մասին: Ապա, ան ողջունեց Զրեսենթա Յովիտի մեր եկեղեցւոյ նորընտիր երեսփոխանները, որոնք առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին ժողովին:

Առաջնորդ Սրբազանը փառք տուաւ Աստուծոյ, որ այս ժողովը տեղի կ'ունենայ Ազգ. Առաջնորդարանի շէնքի ծրագիրին ամբողջացումէն ետք, շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, իր հայրական պատգամին ու հետեւողական ու հոգածու վերաբերմունքին համար: Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ այս շէնքը չմնայ լոկ քարեղէն կառոյց, այլ դառնայ աշխատանքի հնոց ու ոգեղէն լոյսի տարածման կեդրոն, ներշնչելով մեր անհատական ու հաւաքական ընտանիքները, եկեղեցիները, դպրոցներն ու բոլոր ազգային կառոյցները:

Առաջնորդ Սրբազանը հակիրճ կերպով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի հիմնական մարզերուն, որոնց շարքին՝ Կիրակնօրեայ դպրոցները, քրիստոնէական դաստիարակութեան եւ այլ կալուածներ, ու վերջապէս, խօսքը եզրափակեց մաղթելով, որ այս ժողովը նոր հանգրուան մը ըլլայ, անցեալ տարիներու համազօր նախանձախնդրութեամբ եւ բժախնդրութեամբ, անկեղծ մօտեցումով ու շինիչ քննարկումներով յառաջ տանի իր աշխատանքները:

Մնայուն դիւանի ընտրութիւններուն, միաձայնութեամբ ատենապետ ընտրուեցան Տեառք Նազարէթ Ծատուրեան եւ Ռուբիկ Կիւրճեան, իսկ ատենադպիր՝ Տեառք Համօ Գասպարեան եւ Հրայր Ճերմակեան:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիգիճեան իր հերթին ողջունեց ներկաները, ու Ներսէս Շնորհալի Հայրապետի «Առաւօտ Լուսոյ» շարականէն մէջբերում մը կատարելով, մաղթեց, որ այս նոր շէնքը բոլորիս վերանորոգութեան ու աւելի աշխոյժ աշխատանքի առիթ ընծայէ: Ապա, իր խօսքը ուղղելով ներկայ երեսփոխաններուն, մաղթեց, որ անոնք տէր կանգնին մեր շրջաններուն, ճիգ ընեն ժողովուրդը հաւաքելու մեր եկեղեցւոյ շուրջ ու մանաւանդ չբաւականանան ցարդ կատարուած իրագործումներով, այլ ճիգ ընեն միշտ բարելաւելու մեր աշխատանքներու որակը եւ տարածքը, հիմնելու համար նոր եկեղեցիներ ու դպրոցներ, վասն ծառայութեան մեր ժողովուրդին ու ընդհանրապէս նորահաս սերունդներու կարիքներուն:

Հիւրընկալ եկեղեցւոյ հոգաբարձութեան անունով ողջոյնի խօսք արտասանեց Տիար Հրայր Ճերմակեան, մաղթելով, որ ժողովին աշխատանքները ընթանայ հեզասահ:

Բանաձեւի յանձնախումբի անդամ ընտրուեցան Տեարք Հայկազ Թրթռեան, Տիգրան Տէր Սարգիսեան եւ Տաճատ Երեցեան:

Այնուհետեւ, ծխական շրջաններու հոգաբարձութեանց ու յանձնախումբերու ներկայացուցիչները տուին հակիրճ զեկուցումներ՝ իրենց տարեկան աշխատանքին մասին:

Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան նեկայացուց Ազգ. Վարչութեան նիւթական գործունեութեան տեղեկագիրը, իսկ հաշուեքննիչ յանձնախումբի անդամ Տիար Չարեհ Մարգարեան ներկայացուց յանձնախումբի աշխատանքին արդիւնքը, հաստատելով, որ Ազգ. Վարչութեան հաշիւները պահուած են ճշգրտօրէն եւ համաձայն հաշուապահական օրէնքներու:

## **ՊԱՐԳԵԱՏՐՈՄ**

Ժողովի աշխատանքներուն շարունակումէն առաջ, Առաջնորդ Սրբազանը ժողովին ուշադրութիւնը հրաւիրեց այն իրողութեան վրայ, որ Ազգ. Երեսփոխանական Ժողովին առիթով, վերջին քանի մը տարիներուն ստեղծուած է գեղեցիկ ականդութիւն մը, ըստ որուն, կը պարզեւատրուին մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին նուիրեալ ծառայութիւն տրամադրող ազգայիններ ու ժողովականներ: Այս տարի, այս պատիւին կ'արժանանայ բարեշնորհ Րաֆֆի Սրկ. Կարապետեան, մեր եկեղեցւոյ բազմամեայ իր ծառայութեանց ու մանաւանդ մեր շրջանի հայ բանտարկեալներուն իր մատուցած անձնդիր սպասարկութեան համար: Առաջնորդ Սրբազանը, Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան ատենապետներով շրջապատուած, յատուկ յուշանուէր մը յանձնեց Րաֆֆի Սարկաւազին, որ իր կարգին շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք արտասանեց ու լուսաբանութիւններ տուաւ իր տարած աշխատանքին մասին:

## **ՁԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ**

Թեմիս Ազգային Վարժարաններու Կնամակալ Մարմինի ատենապետ Տիար Աւօ ԶԷՀիշեան ներկայացուց զեկուցում մը, լուսարձակի տակ առնելով մեր վարժարաններու ուսումնական, նիւթական եւ յարակից վիճակները: Ան յատկապէս վեր առաւ հայերէն դասանիւթեր ականդող ուսուցիչներու պարագան եւ հաւաստեց, որ Կնամակալ Մարմինը յատուկ ծրագիրներ պիտի մշակէ անոնց բարելաւման համար:

Յաջորդաբար լրացուցիչ զեկուցումներ ներկայացուցին Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան եւ Ազգ. Վարչութեան ատենադպիր Տիար Պօղոս Սասունեան: Ժողովականներու լուսաբանական հարցումներուն սպառիչ պատասխաններ տուին Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները: Տարուած աշխատանքներուն ըստ էութեան քննարկումէն ետք, բանաձեւի յանձնախումբը ներկայացուց հետեւեալ գնահատականը.-

*«Բանաձեռի յանձնախումբս, լսելէ ետք Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան տեղեկագիրներն ու անոնց լրացուցիչ գեկուցումները, Ազգ. Վարչութեան հաշուական գեկոյցը եւ հաշուեքննիչ մարմինի տեղեկագիրը, ժողովականներուն հարցումներն ու պատասխանները, ինչպէս նաեւ ժողովականներուն ըստ էութեան քննարկման ատեն եղած արտայայտութիւնները, յանձնախումբս Սրբազանին, Ազգ. Վարչութեան, Կրօնական Ժողովին, Խնամակալ Մարմինին եւ Կրօնական Դաստիարակութեան նուիրեալ պատասխանատուներուն աշխատանքը իր ամբողջութեանը մէջ կը գտնէ «յոյժ գնահատելի»:*

Բանաձեռը որդեգրուեցաւ միաձայնութեամբ: Ապա, առաջին օրուան նիստերը փակուած յայտարարուեցան ժամը 9ին:

## **ԵՐԿՐՈՐԴ ՕՐ**

Ազգային երեսփոխանական ժողովի երկրորդ օրուան աշխատանքները սկսան Շաբաթ, 19 Մայիսի առաւօտեան ժամը 9:00ին, աղօթքով եւ Առաւօտ Լուսոյ շարականին միացեալ երգեցողութեամբ:

Օրակարգի առաջին կետն էր Ազգային Վարժարաններու նոր կանոնագիրին քննարկումը: Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան ժողովականներուն հակիրճ գեկուցում մը տուաւ Կանոնագիրի վերամշակման աշխատանքներուն մասին, քննարկումները դնելով հունի մէջ: Ան նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք ներդրում ունեցան այս կանոնագիրին վերամշակման մէջ:

Նոր կանոնագիրին որդեգրումէն առաջ, ժողովը ըստ օրինի բեկանեց Թեմի նախկին կանոնագիրը, ճամբայ հարթելով նաեւ Թեմական Կանոնագիրին վերապատշաճեցման:

Յետ քննարկումներու եւ նկատողութեանց արձանագրումին, Կրթական Համակարգի նոր կանոնագիրը քուէարկութեան դրուեցաւ ու որդեգրուեցաւ միաձայնութեամբ:

Ժողովը անցաւ յառաջիկայ տարուան ծրագիրներու մշակման ու այդ նպատակով առաջարկներու արձանագրութեան: Առաջարկներ բերուած էին Կրօնական Ժողովին եւ կարգ մը ծխական շրջաններու կողմէ, որոնց վրայ աւելցան ժողովականներու առաջարկներն ու նկատողութիւնները: Վերջապէս, ժողովը վաւերացուց յառաջիկայ տարուան պիւտճէի նախահաշիւը եւ ընտրեց հաշուեքննիչ յանձնախումբը, որուն մաս կազմեցին Տեարք Կարօ Էշկիեան, Վարդան Մինասեան եւ Չարեհ Մարգարեան:

Չնախատեսուած հարցերու օրակարգին տակ, ժողովը քննարկեց Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան կողմէ ներկայացած նամակ մը, որուն հետապնդումը վստահուեցաւ Ազգային Վարչութեան:



Օրակարգը սպառած ըլլալով, խօսք առին Ազգային Վարչութեան ատենապետն ու Առաջնորդ Սրբազանը: Սրբազանը իր եզրափակիչ խօսքին մէջ գնահատանք արձանագրեց դիւանին, անձնակազմին, իրենց տարած աշխատանքին համար, եւ կոչ ուղղեց հաւատարմութեամբ ու նուիրումով շարունակելու Թեմական աշխատանքները:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը պատրաստակամութիւն յայտնեց հիւրընկալելու յառաջիկայ տարուան ժողովը:

Ազգային Երեսփոխանական Ժողովի 35րդ նստաշրջանը փակուեցաւ ժամը 2ին, աղօթքով ու «Կիլիկի» «ի խմբերգումով:

### WESTERN PRELACY 35<sup>TH</sup> REPRESENTATIVE ASSEMBLY

## **ASSEMBLY HIGHLY COMMENDS ACTIVITIES OF PRELATE AND COUNCILS**

- REVISED SCHOOLS' BY-LAWS RATIFIED
- CHAPLAIN RAFFI GARABEDIAN HONORED

On the afternoon of Friday, May 18, the 35<sup>th</sup> Prelacy National Representative Assembly convened presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, members of Boards of Trustees and parish councils, Board of Regents, principals and directors. The Assembly took place at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall of the Prelacy.

The Assembly officially opened with a prayer and a hymn led by the Prelate, followed by remarks. The first remark was the taped message of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. His Holiness commended the completion of the new Prelacy headquarters as well as the efforts and devotion of the Prelate, council members, and supporters of the Prelacy then focused on two vital topics, education and spiritual guidance of youth. His Holiness urged for special care to be given to our schools and for new schools to open because our schools and churches collaboratively are the institutions that offer spiritual nourishment for the new generation. He also noted that special attention must be given to the youth and real efforts have to be made to draw them closer to our national institutions. His Holiness concluded by offering his blessings to the Assembly.

Chairman of the Executive Council Dr. Garo Agopian then welcomed the delegates and in speaking of their duties reminded them that their mission is not limited to this meeting but rather is an ongoing process that they should be carrying out throughout the course of the year. He concluded by thanking the Board of Trustees of Forty Martyrs Church for hosting the Assembly.

In his remarks the Prelate firstly also thanked the host church and commended the Prelacy staff for their hard work especially in the preceding few months. He then greeted the newly elected delegates from the Crescenta Valley parish who were participating in the Assembly for the first time. The Prelate expressed his thanks and gratitude to His Holiness for his message and guardianship and continued by briefly referencing the fundamental activities that are the framework of the Prelacy's mission. He concluded by wishing success to the proceedings of the Assembly.

The next speaker was Central Executive Council representative Mr. Khajag Dikijian who urged the delegates to spare no resources in drawing our people closer to our church, and to not be satisfied with the status quo but rather to continually work to establish new parishes and schools in service to our people and to meet the needs of the new generation.

On behalf of the host church Mr. Hrair Jermakian greeted the delegates and wished them a productive meeting. At the conclusion of remarks and the election of the Resolutions Committee, representatives from each parish gave their annual activities reports followed by the presentation of the financial report by Executive Council Treasurer Mr. Vahan Bezdikian and the report by Auditing Committee member Mr. Zareh Markarian.



Before proceeding to the items on the agenda, the Prelate reminded the delegates that for the past few years, it has become a tradition for the Assembly to honor individuals who serve our church and people. This year, Chaplain Raffi Garabedian was honored and was presented with a memento by the Prelate for his decades-long service and

commitment to the Armenian Church and more specifically for the spiritual guidance he offers to Armenian inmates in our area.

The reports continued with Board of Regents Chairman Mr. Avo Kechichian addressing the current state of our schools, with regards to both quality of education and financial situation. In speaking of Armenian subject instruction, he assured the delegates that the Board of Regents is in the process of drafting programs for the enhancement of this field. Supplementary reports were given by Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Secretary Mr. Boghos Sassounian followed by a question and answer session.

At the end of the reports and discussion, the Resolutions Committee deliberated and issued the following statement: *"After hearing the reports of the Prelate, Religious and Executive Councils and supplementary reports, the financial and auditing reports, as well as the questions and comments of the delegates and responses, the committee finds the activities of the Prelate,*

*Executive Council, Religious Council, Board of Regents, and Christian Education Department highly commendable.”*

The resolution was adopted unanimously and the session was closed at 9:00 p.m.

The second day of the Assembly was officially opened on Saturday morning with prayer. The first item on the agenda was the analysis of the revised schools' by-laws. Dr. Garo Agopian gave a brief account of the revision process and thanked the contributors for their input. After close assessment, the Assembly voted to adopt the revised by-laws. The Assembly then proceeded to draft a yearly agenda and welcomed suggestions brought forth by the Religious Council parish representatives and delegates. Following the approval of the budget for the next fiscal year, the election of a new auditing committee, and a discussion of unforeseen matters, concluding remarks were delivered by Dr. Agopian and the Prelate commending all the servants of our church for their hard work and urged them to continue their service with loyalty and commitment.

Prior to the official close of the Assembly with prayer, the Board of Trustees of St. Mary's Church expressed their readiness to host the next Assembly.